

«Ներքին հիվանդություններ» մասնագիտությամբ

ասպիրանտուրայի ընդունելության քննական հարցաշար

1. Ռևմատիզմ. սահմանումը, բնութագիրը, էթիոլոգիան, ախտածագումը, կլինիկական պատկերը, ախտորոշումը և տարբերակիչ ախտորոշումը, բուժումը և կանխարգելումը: Ինֆեկցիոն էնդոկարդիտ. սահմանումը, բնութագիրը, ենթասուր կամ ձգձգվող ինֆեկցիոն էնդոկարդիտ, էթիոլոգիան և պաթոգենեզը, կլինիկական պատկերը, ախտորոշումը և տարբերակիչ ախտորոշումը, բուժումը, կանխարգելումը:
2. Միթրալ արատներ. սահմանումը, բնութագիրը, կլինիկական պատկերը, ախտորոշումը և տարբերակիչ ախտորոշումը, բուժումը: Միտրալ փականի պրոլապս. սահմանումը, բնութագիրը, միտրալ փականի պրո-լապսի դասակարգումը, ախտորոշումը, բուժումը:
3. Աորտալ արատներ. էթիոլոգիան, ձևաբանությունը, ախտաբանական ֆիզիոլոգիան, կլինիկական պատկերը, բուժումը, ախտորոշումը և տարբերակիչ ախտորոշումը, բուժումը, վիրահատության ցուցումները:
4. Եռփեղկ (տրիկուսպիդալ) փականի անբավարարություն. էթիոլոգիա, ախտաբանական ֆիզիոլոգիան, կլինիկական պատկերը, ախտորոշումը և տարբերակիչ ախտորոշումը, բուժումը: Սրտի համակցված և զուգակցված (բազմափականային) արատներ. համակցված միտրալ արատ, համակցված աորտալ արատ, աորտալ անբավարարության և միտրալ ստենոզի զուգակցում, միտրալ և աորտալ ստենոզների զուգակցումը, միթրալ և եռփեղկ փականի (տրիկուսպիդալ) արատների զուգակցումը:
5. Զարկերակային հիպերտենզիա. սահմանումը, տարածվածությունը, բնորոշումը, տերմինաբանությունը, դասակարգումը (ամերիկյան և եվրոպական), ՋՃ-ի չափումը Կորոտկովի անուղղակի աուսկուլտատիվ մեթոդով, ՋՃ-ն չափելու սկզբունքները: Ֆիզիկական քննության տվյալները, որոնք մատնանշում են ՋՃ-ի երկրորդային բնույթը և թիրախ օրգանների ախտահարման առկայությունը, բուժումը, ՋՀ-ի բուժման առանձնահատկությունները առանձին խմբերի հիվանդների շրջանում:
6. Ախտանշանային զարկերակային հիպերտենզիաները. սահմանումը, դասակարգումը: Երիկամային ծագման զարկերակային հիպերտենզիաները. անամնեստիկ տվյալներ, հարկլինիկական հետազոտություններ, առանձնահատկությունները առանձին հիվանդությունների դեպքում: Էնդոկրին ծագման զարկերակային հիպերտենզիաները. առաջնային հիպերալդոստերոնիզմ (Կոնի համախտանիշ), ֆեոքրոմոցիտոմա, Կուշինգի համախտանիշ: Աորտայի կոարկտացիա, մնացած սիմպտոմատիկ զարկերակային հիպերտենզիաները:
7. Քրոնիկական սրտի իշեմիկ հիվանդություն, ստենոկարդիա. համաճարակաբանությունը, բնութագիրը, ռիսկի գործոնները: Ստենոկարդիայի ախտորոշումը. հիմնական կլինիկական նշանները, սրտամկանի իշեմիան սադրող, ընթացքը խորացնող գործոնները և հիմնական վիճակները, գործիքային ախտորոշումը, կորոնար անգիոգրաֆիա:

8. Կայուն ստենոկարդիայի ՖԴ-երը՝ համաձայն Կանադայի սրտաբանների ասոցիացիայի դասակարգման: Տարբերակային (վարիանտային) կամ Պրինցմետալի ստենոկարդիա: Սրտամկանի անցավ (համր) իշեմիա: Ստենոկարդիան տարեցների շրջանում: Սրտային X համախտանիշ: Ստենոկարդիան շաքարային դիաբետի (ՇԴ) դեպքում: Ստենոկարդիայի բուժումը: Սրտամկանի ռեվասկուլյարիզացիա:
9. Սուր պսակային համախտանիշ. տարածվածությունը, նախանշանները, կլինիկական դրսևորումները: Սրտամկանի սուր ինֆարկտ. ախտորոշման կարևորագույն անհրաժեշտ բաղկացուցիչները, Կիլլիպի դասակարգումը, կլինիկական պատկերը, օբյեկտիվ քննությունը, էլեկտրոսրտագրությունը:
10. Սրտամկանի սուր ինֆարկտ. լաբորատոր հետազոտությունները, Էխո ՍԳ-ն, սցինտիգրաֆիկ հետազոտությունները, բուժումը: Սրտամկանի ինֆարկտի բարդությունները. ձախ փորոքի ազատ պատի պատռվածք, միջփորոքային միջնապատի սուր պատռվածք, պերիկարդիտ, ձախ փորոքի անևրիզմա:
11. Սրտամկանի ինֆարկտի բարդությունները. սուր սրտային անբավարարություն, սրտային ասթմա, թոքերի այտուց, կարդիոգեն շոկ, սուր միթրալ անբավարարություն, սրտամկանի ինֆարկտի առիթմիկ բարդություններ, փորոքների ֆիբրիլյացիա, փորոքային հաճախասրտություն (տախիկարդիա), հաղորդականության խանգարումներ, թրոմբոէմբոլիկ բարդություններ:
12. Խնամքը սրտամկանի ինֆարկտից հետո. Անաշխատունակության հարցեր: Հետինֆարկտային կարդիոսկլերոզ. երկրորդային կանխարգելումը և բուժումը,
13. Քրոնիկական սրտային անբավարարություն. սահմանումը, տարածվածությունը, ՍՍ-ի ձևերը և պատճառները: Սուր ՍՍ-ն ընդդեմ քրոնիկականի: Ցածր արտամղումով ՍՍ-ն ընդդեմ բարձր արտամղման ՍՍ-ի: Առիթմիաներ:
14. Քրոնիկական սրտային անբավարարություն. կլինիկական դրսևորումները, սրտային անբավարարության Ֆրեմինգհեմյան չափորոշիչները, ֆունկցիոնալ դասերը: Բուժումը. ԱՓՖ-ի ինհիբիտորներ, սրտային գլիկոզիդներ, բետա-ադրենոպաշարիչներ, միզամուղներ, հակակոագուլյանտներ, հակաառիթմիկներ, օքսիգենոթերապիա, վիրաբուժական բուժում:
15. Կարդիոպաթիաներ. դասակարգումը: Դիլատացիոն կարդիոմիոպաթիա. բնութագիրը, Էթիոլոգիան, պաթոգենեզը, կլինիկական պատկերը, լաբորատոր և գործիքային քննության տվյալները, բուժումը:
16. Կարդիոպաթիաներ. դասակարգումը: Հիպերտրոֆիկ կարդիոմիոպաթիա. բնութագիրը, Էթիոլոգիան, պաթոգենեզը, կլինիկական, սրտի պալպացիան և պերկուսիան, աուսկուլտացիան, լաբորատոր և գործիքային քննության տվյալները, բուժումը:
17. Կարդիոպաթիաներ. դասակարգումը: Ռեսթրիկտիվ կարդիոմիոպաթիա. բնութագիրը, Էթիոլոգիան, տեսակները, կլինիկական, ԷՍԳ-ն, Էխոսրտագրությունը, բուժումը: Աջ փորոքի առիթմոգեն դիսպլազիա. բնութագիրը, Էթիոլոգիան, պաթոգենեզը, կլինիկական: Հարձննդաբերական (պերիպարտալ) կարդիոմիոպաթիա:

18. Միոկարդիտներ. պատճառները, ախտաձագումը, դասակարգումը, կլինիկան, պալպացիան և պերկուսիան, աուսկուլտացիան, ԷՄԳ-ն, Էխոսրտագրությունը, լաբորատոր հետազոտությունները, ախտորոշումը և բուժումը:
19. Թոքաբորբեր. բնութագիրը, տարածվածությունը, դասակարգումը, պատճառագիտությունը, կլինիկան: Կրուպոզ թոքաբորբ: Օջախային թոքաբորբ: Միկոպլազմային և իլամիդիային թոքաբորբեր: Լեզիոնելային թոքաբորբ: Ստաֆիլակոկային թոքաբորբ: Ֆրիդլենդերյան թոքաբորբ: Հեմոֆիլային թոքաբորբ: Կապտաթարախային ցուպիկով պայմանավորված թոքաբորբ: Պնևմոցիստային թոքաբորբ: Վիրուսային թոքաբորբեր:
20. Երկրորդային թոքաբորբեր: Թոքաբորբերի բարդությունները, ախտորոշիչ հետազոտումների միևնույնը, հոսպիտալիզացիայի ցուցումները: Թոքաբորբերի բուժման հիմնական ուղղությունները. պատճառային թերապիա, դրենաժային գործառության բարելավումը, թոքաբորբի բուժման արդյունավետության գնահատումը:
21. Թոքամզի հիվանդությունները. թոքամզային հեղուկի տարբերակումը, տրանստոլատի առաջացման պատճառները, Էքսուդատի առաջացման պատճառները: Թոքամզաբորբերի էթիոլոգիան, դասակարգումը, կլինիկան, հետազոտությունները, բուժումը:
22. Թոքերի քրոնիկական օբստրուկտիվ հիվանդություն (քրոնիկական բրոնխաբորբ). բնութագիրը, դասակարգումը, պատճառները, ախտաձագումը, կլինիկական պատկերը և ախտորոշումը, բուժումը:
23. Բրոնխէկտազային հիվանդություն: Թոքերի վարակային կազմալուծումները:
24. Բրոնխային ասթմա. բնութագիրը, դասակարգումը, պատճառները, ախտաձագումը, կլինիկական պատկերը և ախտորոշումը, բուժումը:
25. Քրոնիկ թոքային սիրտ. բնութագիրը, դասակարգումը, էթիոպաթոգենները, փուլերը, կլինիկան, ախտորոշումը, ֆունկցիոնալ դասերը, բուժումը:
26. Թոքերի տարածուն ինֆիլտրացիայով արտահայտվող հիվանդությունները. բնութագիրը, դասակարգումը, ախտորոշումը, Էկզոգեն ալերգիկ ալվեոլիտ, Գուդպասչերի համախտանիշ, թոքերի իդիոպաթիկ հեմոսիդերոզ, պնևմոկոնիոզները, բժշկածին սերմնացրումներ, իդիոպաթիկ ֆիբրոզացնող ալվեոլիտ, սարկոիդոզ, հիստիոցիտոզ X, թոքային ալվեոլյար պրոտեինոզ, թոքային ալվեոլյար միկրոլիթիազ, թոքերի լեյոմիոմատոզ:
27. Գաստրոէզոֆագեալ ռեֆլյուքս հիվանդություն. բնութագիրը, դասակարգումը, ռիսկի գործոնները, պաթոգենետիկ մեխանիզմները, կլինիկական պատկերը, ախտորոշումը, բուժումը:
28. Գրգռված աղու համախտանիշ. բնութագիրը, համաճարակաբանությունը, ախտաձագումը, դասակարգումը, կլինիկան, ախտորոշումը, բուժումը, կանխարգելումը:
29. Քրոնիկական գաստրիտ. բնութագիրը, դասակարգումը, պատճառագիտությունը, ախտաձագումը, կլինիկական պատկերը, ախտորոշումը, բուժումը:

30. Ստամոքսի և 12-մատնյա աղիքի խոցային հիվանդություն. բնութագիրը, համաճարակաբանությունը, էթիոլոգիան և ախտաձագումը, դասակարգումը, կլինիկական դրսևորումները, ախտորոշումը և պարակլինիկական հետազոտման մեթոդները, բարդությունները, բուժումը:
31. Կրոնի հիվանդություն. բնութագիրը, տարածվածությունը, պատճառագիտությունը և ախտաձագումը, մորֆոգենեզը, կլինիկան, ախտորոշումը: Խոցային կոլիտ. բնութագիրը, տարածվածությունը, պատճառագիտությունը և ախտաձագումը, դասակարգումը, կլինիկական պատկերը, ախտորոշումը, բուժումը:
32. Քրոնիկական պանկրեատիտ. բնութագիրը, պատճառագիտությունը, էթիոլոգիական դասակարգումը, ախտաձագումը, մորֆոլոգիական փոփոխությունները և դրանց հաճախականությունը, կլինիկական դասակարգումը, կլինիկական պատկերը, բարդությունները, հետազոտման լրացուցիչ մեթոդները, բուժման սկզբունքները:
33. Քրոնիկական խոլեցիստիտ. բնութագիրը, էթիոլոգիան և պաթոգենեզը, կլինիկան, լաբորատոր և գործիքային ախտորոշման չափանիշները, ընթացքը և բարդությունները, բուժումը: Լեղաքարային հիվանդություն. բնութագիրը, էթիոլոգիան և պաթոգենեզը, կլինիկական պատկերը, ախտորոշումը, ընթացքը և բարդությունները, բուժումը:
34. Քրոնիկական հեպատիտ. բնութագրումը, դասակարգումը, էթիոլոգիան, ախտաձագումը, մորֆոլոգիան, ակտիվության աստիճանը, կլինիկան, ախտորոշումը: Լյարդի ցիռոզ. բնութագրումը, դասակարգումը, պատճառագիտությունը և ախտաձագումը, մորֆոգենեզը, կլինիկան, ախտորոշումը, բուժումը:
35. Ցիռոզի բարդությունները. պորտալ հիպերտենզիա, սպլենոմեգալիա, այտուց-ասցիտային համախտանիշ, լյարդային էնցեֆալոպաթիա, հեպատոռենալ համախտանիշ, հեպատոպուլմոնար համախտանիշ, հեպատոկարդիալ համախտանիշ:
36. Գլոմերուլոնեֆրիտները. բնութագիր, էթիոլոգիա, պաթոգենեզ:
37. Սուր գլոմերուլոնեֆրիտ. բնութագիրը և տարածվածությունը, կլինիկական պատկերը, միզային համախտանիշ, ախտորոշումը, բարդությունները, կանխատեսումը, բուժումը:
38. Խրոնիկական գլոմերուլոնեֆրիտ. կլինիկական տարբերակները, մորֆոլոգիական ձևերը, բուժումը:
39. Խրոնիկական պիելոնեֆրիտ (երիկամների ռեֆլյուքսային հիվանդություն). Էպիդեմիոլոգիան, էթիոլոգիան, պաթոգենեզը, դասակարգումը, կլինիկան, ախտորոշումը, բուժումը:
40. Երիկամների ամիլոիդոզ. բնութարումը, Էպիդեմիոլոգիան, դասակարգումը, էթիոլոգիան և պաթոգենեզը, պաթոմորֆոլոգիան, կլինիկան, ախտորոշումը, ընթացքը և կանխատեսումը, բուժումը:
41. Նեֆրոտիկ համախտանիշ. բնութագրումը, էթիոլոգիան, պաթոգենեզը, կլինիկան, բարդությունները, կանխատեսումը, բուժումը:
42. Խրոնիկական երիկամային անբավարարություն. բնութագրումը, էթիոլոգիան, պաթոգենեզը, դասակարգումը, կլինիկան, ախտորոշումը, բուժումը:

43. Համակարգային կարմիր գայլախտ. բնութագիրը և տարածվածությունը, էթիոլոգիան և պաթոգենեզը, դասակարգումը, կլինիկան, մահվան պատճառները, լաբորատոր քննության տվյալները, ախտորոշիչ չափանիշները, բուժումը, կանխատեսումը:
44. Համակարգային սկլերոդերմիա. բնութագիրը և տարածվածությունը, դասակարգումը, էթիոպաթոգենեզը, պաթոմորֆոլոգիան, կլինիկան, լաբորատոր հետազոտությունները, ախտորոշիչ չափանիշները, բուժումը:
45. Դերմատոմիոզիտ/պոլիմիոզիտ. բնութագիրը, դասակարգումը, էպիդեմիոլոգիան, էթիոպաթոգենեզը, պաթոմորֆոլոգիան, կլինիկան, բուժումը: Շյոգրենի համախտանիշ. բնութագիրը, էպիդեմիոլոգիան, էթիոլոգիան և պաթոգենեզը, մորֆոլոգիան, կլինիկան, ախտորոշումը, բուժումը:
46. Ռևմատոիդ արթրիտ. բնութագիրը, էպիդեմիոլոգիան, էթիոլոգիան, պաթոգենեզը, կլինիկան, արտահոդային (համակարգային) արտահայտությունները, ախտորոշումը, ախտորոշման չափանիշները, բուժումը:
47. Անկիլոզացնող սպոնդիլիտ. բնութագիրը, էպիդեմիոլոգիան, էթիոլոգիան, պաթոգենեզը, կլինիկան, ախտորոշումը, ախտորոշման չափանիշները, բուժումը: Ռեակտիվ արթրիտներ: Ռայթերի հիվանդություն:
48. Համակարգային վասկուլիտներ. բնութագիրը, դասակարգումը, պատճառները և ախտածագումը, կլինիկական բնորոշումները: Մեծ տրամաչափի անոթների վասկուլիտները: Միջին տրամաչափի անոթների վասկուլիտները: ANCA-կապված վասկուլիտները: Մանր անոթների վասկուլիտները:
49. Օստեոարթրիտ. բնութագիրը, էպիդեմիոլոգիան, էթիոլոգիան և պաթոգոնեզը, ռիսկի գործոնները, դասակարգումը, կլինիկան, առանձին հոդախմբերի ախտահարման առանձնահատկությունները, ախտորոշումը, բուժումը:
50. Հոդատապ. բնութագիրը, էթիոլոգիան և պաթոգենեզը, դասակարգումը, կլինիկան, ախտորոշումը, բուժումը: Պարբերական հիվանդություն. սահմանումը, տարածվածությունը, ախտածագումը, դասակարգումը, կլինիկան, նոպաների ընթացքը. հոդային համախտանիշը, կպումային բարդությունները, այլ բարդությունները և ասոցիացված հիվանդությունները, ամիլոիդոզը, կանխարգելիչ բուժումը, կանխատեսումը: